

ԱՐՑԱԽԸ ԵՎ ՈՒՏԻՔԸ Մ.Թ.Ա. 1-ԻՆ ՀԱԶԱՐԱՄՅԱԿՈՒՄ ԻՐԱՆԻ ԵՎ ԿՈՎԿԱՍԻ ՄԻՋԵՎ

Նժեկի Երանյան
Պատմական միջավայրի պահպանության ծառայություն
Արցախ

Անոտացիա: Հետևյալ հաղորդմամբ անդրադարձել ենք մ.թ.ա. 2-րդ հազ. վերջին և 1-ին հազ. սկզբին Անդրկովկասի և իրանական տափաստանների միջև մշակութային կապերի ուսումնասիրությանը: Թեև առավել հետաքրքրական է քանի որ նշված կապերը, ըստ ամենայնի, ընթացել են Արցախով (Միջի տափաստանով): Դա, անկասկած, իր հետքն է թողել Արցախի երկաթեղարյան մշակույթի վրա: Դրա վառ օրինակներն են առաջավորասիական տիպի մի շարք գենքերի օրինակներ, սկյութական տիպի նետապաքներ և այլ հնագիտական գտածոներ (սկյութական ծագման ռազմի և զարդարանքի առարկաներ), որոնք հայտնաբերվել են Արցախի տարբեր վայրերից, բուն Արցախում և շրջակայրում պահպանված որոշ տեղանուններ և վերջապես Արցախի տափաստաններից հայտնաբերված քարե մարդակերպ կորողները, որոնք կարելի է համարել այս տարածաշրջանում տվյալ կապերի դումինանտ: Հնագիտական գտածոների, տարածաշրջանում հայտնաբերված նրանց գուգահեռների, ինչպես նաև պատմական սկզբնադրյուրների համադրման արդյունքում փորձ ենք արել վերականգնել Արցախի մ.թ.ա. 1-ին հազարամյակի տափաստանային հատվածների մշակույթի որոշ մանրամասներ:

Բանալի բառեր՝ Անդրկովկաս, Եվրասիական տափաստաններ, ուշ բրոնզի և վաղ երկարի դարեր, մարդակերպ կորողներ, կիմմերասկյութական մշակույթ:

Չնայած երկարի առաջին գործածումը տարածաշրջանում փաստվում է մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջերին, սակայն նրա լայն տարածումը սկսում է մ.թ.ա 7-6-րդ դարերից: Եվ ահա այս շրջանում է, որ տեղի էին ունենում էական փոփոխություններ ինչպես նյութական մշակույթում, այնպես և քաղաքական կյանքում: Սա մի շրջան էր, երբ ցեղային և ներցեղային փոփոխաբերությունների արդյունքում զարգանում էին տնտեսական և մշակութային կապերը, տեղի էին ունենում էթնիկական տեղաշարժեր:

Սա մի հարց է, որը, ցավոք սրտի դեռևսի չունի ամբողջական ուսումնասիրություն: Այս ընությունը ընդամենը մեկ փորձ է ի մի բերելու եղած հնագիտական և պատմական սկզբնադրյուրների տվյալները, ներկայացնելու և դասակարգելու առկա մոտեցումները խնդրի վերաբերյալ:

Մ.թ.ա. 1-ին հազարամյակը ողջ Եվրասիական տափաստաններում համարվում է քոչվոր անասնապահության կանոնավոր զարգացման շրջան: Այս կենսածեր նպաստում էր հասարակության մորիլությանը և ռազմական միավորումների ձևավորմանը, քանի որ անհրաժեշտություն էր առաջանում պաշտպանել նախիրը և զրավել նոր տարածքներ: Այս գործընթացը տեղի էր ունենում նաև սկյութական քոչվոր ցեղերի մոտ, ովքեր տարածված էին Վոլգայի արևելքի տափաստաններից մինչև Կասպից ծով և մինչև Հյուսիսային Կովկաս, ներառյալ Կուբանի շրջանը [26, էջ 4-5]:

Այս շրջանում Հյուսիսային Իրանը և Հարավային Կովկասը հաճախ ներկայացվում են որպես հնագույն Սերծավոր Արևելքի ծայրամասային տարածքներ: Ի դեպ, հնագիտական տեսանկյունից, այս երկու շրջանները ունեն մի շարք ընդհանրություններ: Դա հատկապես արդիական է ուշ բրոնզի և վաղ երկարի դարերի համար: Ք. Պիլլերը իր հոդվածում մետաղական և խեցեղեն արտադրանքի օրինակներով մանրամասն ներկայացնում է երկու շրջանների միջև կապերը [28, էջ 305-308]:

Մ. Պոզերովան այս կապերի մեջ առանձնացնում է Արևելյան Անդրկովկասում հայտնի բրոնզե և երկար գենքերի մի քանի տիպ, որոնք, ըստ նրա, անկասկած, իրանական ծագում ունեն: Չափազանց բնութագրական են մի քանի այսպես կոչված առաջավորասիական տիպի դաշույնները, որոնք մ.թ.ա. 2-1 հազ. լայնորեն տարածված են եղել Հունաստանից և Եգիպտոսից մինչև Աֆղանստան: Առաջավորասիական տիպի դաշույնների բնութագրական առանձնահատկությունը նրանց հատուկ ձևի մետաղական բռնակն է, որը երկու կողմից ունի ոսկրից կամ փայտից շերտ: Անդրկովկասում հայտնի են շուրջ երկու տասնյակ այսպիսի դաշույններ, որոնց մեծամասնությունը

գտնվել է պատահաբար: Այն, որ դրանք Անդրկովկասում ներմուծված են և պատկանում են առաջավորասիական տիպին՝ հիմնավորել է Ա. Ինսենը դեռևս 1935 թ.: Նրանք պետք է որ թվազրվեն մ.թ.ա. 2 հազ. վերջ-1 հազ. սկզբով: Հստ Մ. Պոգրեբովյահ՝ իրանական տիպի առաջավորասիական դաշույնները Անդրկովկաս ներթափանցել են Միլի տափաստանով և Նախիջևանով: Մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաև դաշույնների և սրերի մի խումբ, որն ունի բռնակի երկակի լայնացում: Այս տիպը գերակշռում է Արևելյան Անդրկովկասում մ.թ.ա. 9-8 դդ, սակայն այն փոխառած է Իրանից [26, էջ 190-193]:

Թալիշից հայտնաբերված մի քանի զենքերի և նրանց գուգահեռներին է անդրադառնում Մախմուդովը: Հստ նրա՝ Թալիշում ուշադրություն է գրավում բրոնզե մի քանի կացին: Զայտնի են այդպիսի 8 կացիններ: Նրանցից մեկը, որը հայտնաբերվել է Ժակ դե Մորգանի կողմից Լերիկսանի շրջանի Խովիլ գյուղի դամբարանի պեղումներից, գուգահեռներ ունի Օսերիայից: Այն թվազրվում է մ.թ.ա. 1550-1450թթ.: Այս հանգամանքը ցույց է տալիս, որ այդ կապերն ընթացել են մ.թ.ա. 1-ին հազարամյակից դեռ ավելի վաղ [13, էջ 64-71]:

Մ.Պոգրեբովյան, շարունակելով խոսել Անդրկովկասից հայտնաբերված իրանական ծագման զենքերի մասին, կանգ է առնում Սամտավրոյի դամբարանից հայտնաբերված բրոնզե վերադիր բռնակով երկարե դաշույնների վրա: Այս տիպի դաշույններին շատ նման դաշույններ հայտնաբերվել են Զիվիեից: Զիվիեից հայտնաբերված դաշույնները, անկասկած, խոսում են Ուրմիա լճի հարավի և Կենտրոնական Անդրկովկասի միջև գոյություն ունեցած կապի մասին [17, էջ 51]:

Վերոնշյալ տեղեկությունները փաստում են, որ մ.թ.ա. 2 հազ վերջ-1 հազ սկզբին իրանական ծագման զենքերի առավել մեծ քանակություն կենտրոնացված է եղել կենտրոնական և Անդրկովկասի արևելյան շրջաններում: Բոլոր բերված օրինակները թույլ են տալիս պնդել, որ Արևելյան Անդրկովկասի ցեղերը պահպանել են Իրանի, հատկապես նրա հյուսիսարևմտյան շրջանների հետ կապերը: Այս կապերը, ինչպես էլ արտահայտված լինեն, ակնհայտ է, որ տեղել են բավական երկար ժամանակ [16, էջ 193-195]:

Ակնհայտ է նաև, որ մշակութային կապերը ծագել են ավելի վաղ՝ դեռևս մ.թ.ա. 2-րդ հազարամյակում, առանձին դեպքերում, գուցե և ավելի վաղ: Սակայն ինչպես իրավացիորեն նշում է Ս. Բեսսոնովան, այս մշակութային հարաբերությունները երբեք չեն հասել այնպիսի բարձր մակարդակի, ինչպես այն եղավ սկյութների դեպքում [7, էջ 5-8]: Նրանք առավել ակտիվ գործել են մ.թ.ա. 1-ին հազարամյակի սկզբին՝ սկսած առնվազն մ.թ.ա. 8-7 դր-ից:

Իրանալեզու ցեղերի՝ Իրանական սարահարթ և հարեւան շրջաններ ներթափանցման գործընթացը, որը սկիզբ դրեց ժամանակակից արևմտահրանական ազգերի ձևավորմանը, միշտ գտնվել է հետազոտողների ուշադրության կենտրոնում: Չնայած Անդրկովկասում սկյութական մշակույթի հուշարձաններին և նրանց հետ կապված խնդիրներին նվիրված է ծավալուն գրականություն, այնտեղ սկյութական, անդրկովկասայան և առաջավորասիական համալիրների նշանակությունը ընդհանուր համակարգում համապատասխան չափով դասակարգված չէ: Զկա մեկ ընդհանուր կարծիք այն մասին, թե արժե՞ արդյոք սկյութական տիպի առարկաները, որոնք հայտնաբերվել են Արևելյան Անդրկովկասից, համարել այստեղ սկյութական էթնիկ տարրի ներկայության ցուցիչ, թե՞ խոսքը կարող է գնալ զուտ առևտրական և մշակութային կապերի մասին առանց մեծ էթնիկ խմբերի վերաբնակեցման: Փորձենք հնագիտական նյութի ուսումնասիրության միջոցով հասկանալ կիմմերասկյութական էթնիկական և մշակութային տարրի ներկայության հավանականությունը Արցախյան տափաստաններում և հասկանալ նրանց այս տարածքներում հայտնվելու ժամանակաշրջանը, գոյատևման ժամանակահատվածը, պայմանները և պատճառները:

Սկյութները պատմական թատերաբեմ հայտնվեցին հենց այն ժամանակ, եթե լայն գործածում էր ստանում երկարք: Հենց մ.թ.ա. 7-րդ դարում է տեղի ունենում երկարե մետաղագործության ամբողջական «հայթանակ» արտադրության մեջ: Հստ Բ. Տեխովի՝ սկյութական ժամանակաշրջանի երկրորդ կարևոր իրադարձությունը քոչվոր անսանապահության առաջացումն էր, որը զարգանում էր հովվականից առանձին և տարբերվում էր իր առանձնահատկություններով [20, էջ 5]:

Սկյութների պատմությունը և մշակույթն ուսումնասիրելու համար գրավոր սկզբնադրյուրները բավականին սահմանափակ են: Այս հարցի շուրջ մենք տեղեկություն ստանում ենք հիմնականում հոյն պատմիչներից՝ Հերոդոտոս, Քսենոփոն [5], Ստրաբոն [18] և ուրիշներ: Հստ Հերոդոտոսի հադրդման՝ «Կովկաս լեռն ունենալով իրենց աջ կողմում» [2, էջ 104] սկյութական գորաջոկատները Հարավուսական տափաստաններից Դարբանդի լեռնանցքով ներխուժեցին Կովկաս, պարտության

մատնեցին մեղացիներին, ապա, ասպատակելով Հայկական լեռնաշխարհը (Վանտոսապի թագավորությունը՝ Ուրարտուն), հասան մինչև Հյուսիսային Միջազգետք (Ասորեստան) [3, էջ 392]: Սկյութների արշավանքները Կովկասի վրայով բավական մանրակրկտորեն քննարկվել են Ե. Կրուպնովի [12, էջ 186-194]: և Վ. Վինոգրադովի [8, էջ 27] աշխատություններում:

Բնական է ենթադրել, որ այս հզոր տեղաշարժի ճանապարհին սկյութները չեն կարող շրջանցել Արցախն ու Ուտիքը, հատկապես նրանց տափաստանային հարուստ արոտավայրերը և բարերեր գետահովիտները: Արցախի տարածքում սկյութների առկայության վերաբերյալ պատմական տեղեկությունները լրացնելու և հաստատելու են զայս հնագիտական սկզբնադրյուրները, որոնք առաջմ թեև հատվածական են և քիչ ուսումնասիրված, բայց մեզ հաղորդում են արժեքավոր տեղեկություններ: Արցախում սկյութական խնդրին առաջիններից մեկը անդրադարձել է Սմբատ Տեր-Ավետիսյանը, ով 1924 թ. ամռանը, Անդրկովկասի կենտրոնական կոմիտեին կից գտնվող Գիտական ասոցիացիայի կազմում լինելով Արցախում, շրջել է Խաչենում և Զրաբերդում և հաղորդել արժեքավոր տեղեկություններ, այդ տարածքների մշակութային ժառանգության վերաբերյալ: Ըստ նրա՝ Թարթառի և Խաչենագետի հովիտներում տարածված տարբեր չափսերի դամբարաններից մի քանիս իրնեց արտաքին կառուցվածքով տիպիկ են հարավուսական տափաստաններին և պատկանում են սկյութական մշակույթին [19, էջ 193]:¹

Տարածաշրջանի հնագիտական տվյալները խոսում են այն մասին, որ հենց ակտիվ կիմմերա-սկյութական արշավանքների շրջանում է, որոնց մասին հիշատակվում է գրավոր սկզբնադրյուրներում, որ Հարավարևելյան Անդրկովկասի առանձին շրջաններում, մասնավորաբար Մինգեշառուրում, հայտնվում են նոր թաղումային հուշարձաններ և ծեսեր, որոնք ել արդեն փաստում են այստեղ նոր էթնիկական տարրի ներթափանցումը: Այստեղ հայտնված ցեղային վերնախավի կուրգանային թաղումները և համայնքի շարքային անդամների հիմնահողային գերեզմանները հանդիսանում են խոսուն փաստեր այդ ցեղերի ներկայության մասին: Նշված դամբարաններում հաճախ հանդիպում են տիպիկ սկյութական կոր դաշույններ: Նրանց շարքում հանդիպում են նաև սկյութական ակինակներին մոտ սրեր, նիզակի ծայրեր [6, էջ 5-9]:

Արցախի տարածքից հայտնաբերված սկյութական տիպի առարկաների մեջ որոշակի թիվ են կազմում սկյութական տիպի նետասլաքները, որոնք հայտնի են Արցախի մի շարք հնավայրերից: Հատկապես աչքի է ընկնում Ներքին Հոռաթաղից գտնված սկյութական տիպի նետասլաքների հավաքածուն,² որը հայտնաբերվել է Ներքին Հոռաթաղ գյուղից հյուսիս-արևմուտք՝ Պտաղմութալ տեղավայրից: Դամբարանը թվագրվում է մ.թ.ա 7-6-րդ դդ. [10, էջ 23]: Սա Արցախում և շրջակայրում սկյութական տիպի նետասլաքների հայտնաբերման միակ դեպքը չէ: Սկյութական տիպի նետասլաքներ կան նաև տարբեր հուշարձաններից, պատահականորեն հայտնաբերված անձնական հավաքածուներում, որոնք դեռևս ուսումնասիրված չեն: Մինգեշառուրի դամբարանադաշտի դամբարաններից ևս գտնվել են մեծ թվով սկյութական տիպի բրոնզե նետասլաքներ, որոնց գուգահեռները հայտնի են Հյուսիսային Կովկասի այլ հուշարձաններից [11, էջ 86], [15, էջ 306-312], [6, էջ 4-14]: 1896թ. Ա. Իվանովսկու կողմից Գետաբեկ և Կալակենդ գյուղերի դամբարաններում իրականացված պեղումների ժամանակ քարարկողային տիպի N 48 դամբարանում խոչալուգետաբեկյան մշակույթին բնորոշ այլ գտածոների շարքում հայտնաբերվել է «սկյութական» տիպի 8 նետասլաք: Գանձակի շրջանում՝ Սարիբեկի բնակավայրի 1957թ. պեղումների ժամանակ հայտնաբերված հիմնահողային թաղմանը կից ևս հայտնաբերվել են «սկյութական» տիպի բրոնզե նետասլաքներ և կոր, մանգաղաձև դաշույն: Թաղումից հայտնաբերված նյութերը թույլ են տալիս այն թվաքրել մ.թ.ա. 7-6րդ: Սարիբեկից է հայտնաբերվել նաև կենդանագլուխ ապարանջան: Նրա հայտնվելը այստեղ բացարձում է տեղի ցեղերի և առաջավորասիական երկրների հետ մշակութային-տնտեսական կապերով [21, էջ 185]: Սկյութական տիպի նետասլաքներ են գտնվել նաև Արցախի Տիգրանակերտի պեղումներից՝ Ամրացված թաղամասում, Անտիկ առաջին և Կենտրոնական թաղամասերում: Դրանք վերաբերում են մ.թ.ա. 1-1-ին դարերին և վկայում են տվյալ տիպի նետասլաքի երկարակեցության մասին:

¹ Դամբարանների ծագման և նրանց էթնո-մշակութային պատկանելիության վերաբերյալ տեղեկությունները մասնակի են և թերի, ուստի այս հարցը կարիք ունի հանգամանալից ուսումնասիրության:

² Ներքին Հոռաթաղ գյուղը գտնվում է Մարտակերտի շրջանում, Թարթառի աջ ափին:

Գիտնականների մեծ մասը, ովքեր այս կամ այն չափով գրադպում են դեպի Անդրկովկաս սկյութական մշակութային տարրի ներթափանցման ուսումնասիրմամբ նշում է, որ այս նետալաքների մեծ տարածումը կապված է Անդրկովկասի միջով դեպի Առաջավոր Ասիա սկյութների ներթափանցման հետ, որը տեղի է ունեցել մ.թ.ա. 7-րդ դ. [11, էջ 86]:

Հստ Ս. Եսայանի՝ Ստեփանակերտի գավառագիտական (այժմ Արցախի պետական պատմաերկրագիտական) թանգարանում է պահպում նաև սկյութական երկարեւ ակինակ, որի հայտնաբերման վայրը հայտնի չէ [10, էջ 23]: Սակայն մեր կողմից թանգարանում իրականացված հնագիտական հավաքածուի հետազոտության ընթացքում նման իր չգտնվեց:

Արցախի Արևշատ (Նախկին Դոլանլար, Հաղորդի շրջան) գյուղի դամբարանադաշտի տարածքից հայտնի են բրոնզե հայելի, «փշավոր գուրզ», երկարեւ կոր դանակներ և կիմմերա-սկյութական մշակութային ընդհանրությանը բնորոշ այլ իրեր:

Մ. Պոգրեբովան և Ս. Եսայանը, ովքեր գրադպել են Անդրկովկասում սկյութական մշակույթի խնդիրների ուսումնասիրությամբ, իրենց բովանդակալից աշխատությունում ևս անդրադառնում են Անդրկովկասում սկյութական մշակութային հետքերին [10]: «Սկյութական մշակույթի տարրեր» հասկացության տակ նրանք ներառում են բոլոր այն առարկաները, որոնց կապը մերձանեծովյան մշակույթի հետ կասկած չի հարուցում՝ սպառազինության պարագաներ, ձիու սանձի բեկորներ, սկյութական կենդանական ոճով զարդարանքի պարագաներ: Նրանք այս ցանկը համալրում են նաև այնպիսի առարկաներով, որոնք հայտնաբերվել են անդրկովկասյան հուշարձաններում, սակայն չունեն հստակ ընդգծված մշակութային պատկանելություն: Այսպիսով, նրանք Արցախում և հարևանությամբ առանձնացնում են ութ հուշարձան, որոնք այս կամ այն կերպ կակապված են սկյութական մշակույթի հետ:

Հետաքրքիր փաստեր ենք ստանում նաև Միջի տափաստանից ոչ շատ հեռու գտնվող Թովուզի շրջանից: 2013 թ. հունիսին Ադրբեջանի Գիտությունների ազգային ակադեմիայի Հնագիտության և ազգագրության ինստիտուտը հնագիտական հետախուզական աշխատանքներ է իրականացրել Թովուզի շրջանում: Այստեղ հայտնաբերվել են մի քանի նոր կուրգանային խմբեր: Նրանցից մեկի վրա՝ որը ստացել է Թովութանդագ անունը, իրականացվել են հնագիտական աշխատանքներ: Պեղված դամբարանի թաղումային խցում հայտնաբերվել են 41 քարե կոթողներ: Նրանց քարձրությունը հասնում է 0,85-0,35մ, կտրվածքում շեղանկյունաձև, եռանկյունաձև են: Հետազոտվող հուշարձանի միակ ժամանակագրական ցուցիչը թաղման խցում հայտնաբերված խեցելենն է, համաձայն որի հուշարձանը թվագրվում է մ.թ.ա. 9-7-րդ դդ.: Հստ հուշարձանը հետազոտվող հնագետների՝ արձանները ամենայն հավանականությամբ պատկանում են կիմմերական մշակույթին: Այստեղ հարկ է ավելացնել, որ Վ. Օլխովսկին «կիմմերական» արձանների հայտնվելը համարում է մ.թ.ա. 8-7-րդ դ առաջին կեսի երսույթներ: Հավանաբար, այդ նույն ժամանակին կարելի է վերագրել նաև հետազոտվող կուրգանը [9, էջ 147-150]:

Մասնագիտական գրականության մեջ Հայկական լեռնաշխարհում սկյութների ներկայության վերաբերյալ քննարկումները, սակայն, այսքանով չեն ավարտվում: Հնագետներին և պատմաբաններին ուսումնասիրության մեծ աղբյուր է տրամադրում նաև որոշ տեղանունների քննությունը: Արցախում և Ուտիքում քիչ չեն բնակավայրերը, որոնք գիտնականները կապում են իրանական ցեղերի հետ: Առանձնապես չխորանալով այդ տեղանունների քննության մեջ և այս թեման թողնելով մի առանձին հետազոտության՝ նշենք միայն եղած կարծիքներից մի քանիսը:

Սկյութների հետ ամենամեծ աղերս ունեցող բնակավայրը Շակաշեն/Սակասեն գավառն է (ներկայում Գանձակն ու Շշալկա տարածքները), այն է՝ «Չակերի (սակերի) շեն (բնակավայր)»: Տ. Դալայանը նշում է, որ այս ցեղանվան հետ է գուցե կապված Շաքի քաղաքի անունը, որը գտնվում է Գանձակից ոչ հեռու՝ Կուր գետի մյուս ափին [1, էջ 63-66]: Հավանաբար Տր քաղաքիչն առկա է նաև Նախշենանի հյուսիսարևմտյան մասում գտնվող Շարուր գավառի անվան մեջ [4, էջ 210]:

Ինչպես նշում է Ի. Դյակոնովը, սկյութների, ինչպես և այլ իրանական ժողովուրդների ընդհանրական ցեղանունն ի սկզբանե եղել է «Արիա» (aryā-): Հստ Տ. Դալայանի՝ շատ հավանական է, Կուր-Արաքայան միջագետքը, որը հետազոտվում ստացավ Առանի դաշտավայր անվանումը, կապված է սկյութների «Արիա» ցեղանվան հետ: Ariana-ից է ծագում նաև Աղվանքի մյուս անվանումը՝ Առան: Այս անվան հնչունափոխված տարրերակներն են հենց Աղուանք (որից հուն. Alban-ia) երկրանունը և երբեմ նրա կազմի մեջ մտած գավառների անունները՝ Առան-ռոտ, Մեծ Իրանք [1, էջ 63]:

Քննության առնելով առկա տեղանվանաբանական նյութը ասել, թե սկզբութները կարողացան փոխել այդ շրջանի ազգագրական բնույթը, չափազանցություն կլիներ, և համենայնդեպս, իրողությանը հակառակ: Եվ ինչպես իրավացիրորեն նշում է Տ. Դալայյանը, սկզբութական այն զանգվածը, որը մնաց Հայկական լեռնաշխարհում, կազմեց հայ ժողովրդի մի մասը և իր լեզվի բազմաթիվ տարրերը թողեց հայոց տեղանուններում, անձնանուններում և բառապաշտում:

Քննվող թեմայի ուսումնասիրության մեջ առանձնահատուկ տեղ են գրավում Արցախից՝ Միլի տափաստանի շարունակությամբ գտնվող Մարտակերտի շրջանի և շրջակայքի հարթավայրային գոտիներից հայտնի քարե մարդակերպ կոթողները: Այս կոթողները կտրվածքում մոտավորապես ուղղանկյուն, տափակ երկայնական սալեր են, որոնք երկու հորիզոնական գոտիների միջոցով բաժանվում են երեք մասի՝ ընդգծելով մարմնի երեք մասերը զլուխը, իրանը և գոտկատեղից ներքև հատվածը: Կոթողներն ունեն 30-40 սմ լայնություն, 120-140 սմ (երբեմն մինչև 200 սմ) բարձրություն և մինչև 20 սմ հաստություն: Բոլոր կոթողները պատկերագրական առումով գրեթե միանման են: Դեմքի հատվածում պատկերված են քիթը, աչքերը և բերանը, իրանի դիմացի հատվածում՝ ձեռքերը, որոնք բոլոր դեպքերում ծալած են կրծքին, իսկ դաստակները պարզած են դեպի վեր: Գոտկատեղից ներքև հատվածը, ուր ենթադրվում են ոտքերը, մշակված չեն, քանի որ նախատեսված է այն հողի կամ քարե պատվանդանի մեջ ուղղաձիգ կանգնեցնելու համար: Հակառակ կողմից մեծ մասի մոտ պատկերված են մեջքին փոխած զլանոցը, որոշների մոտ նկատվում է նաև գոտկատեղին «ամրացված» սուր-դաշույնը: Ներկայում փաստված է շուրջ երեք տասնյակ մարդակերպ կոթող, որոնցից մի քանիսը գտնվում է Մարտակերտի, որոշները Ստեփանակերտի պատմա-երկրագիտական թանգարանի բակում, իսկ մեծ մասը գտնվում է դաշտում: Չնայած կոթողներից որևէ մեկը չի ֆիքսվել իր նախնական կանգնեցման վայրում, սակայն բոլորը գտնվել են Արցախի դաշտային-հարթավայրային հատվածներում, ներկայիս Մարտակերտի շրջանի շրջակայքում: Ուստի ակնհայտ է, որ նրանց սկզբնական կանգնեցման վայրը պետք է որ շատ հեռու չինի հայտնաբերման վայրերից: Չնայած առանձին կոթողներ տեղ են գտել մի քանի հետազոտողների աշխատություններում, սակայն նրանց համալիր ուսումնասիրություն սկսել է իրականացվել մեր կողմից՝ Արցախի Շիգրանակերտի հնագիտական արշավախմբի կազմում սկսած 2013թ-ից:

Նյութի առավել լայն ուսումնասիրությունը մեզ թույլ է տալիս տեսնել մարդակերպ կոթողների գուգահեռները հարակից շրջաններում: Նմանատիպ կոթողների մենք հանդիպում ենք սկսած Իրանական տափաստաններից, մինչև Հյուսիսային Կովկաս, Մերձական շրջաններ, Ղրիմ և արհասարակ ողջ Եվրասիական տափաստաններում:

Իրանական տափաստաններում, մանավորապես Արևելյան Ատրպատականում գտնվող Մեշրինշահիր (հնագույն Շահրիերի) դաշտավայրում տարբեր տարիների աշխատած արշավախմբերը և հուշարձանն այս կամ այն կերպ ուսումնասիրած հետազոտողները (Չարլզ Բրնեյը, ով հետազոտություն է իրականացրել դեռևս 1978 թ., Թեհրանի Թարբիաթ Մոդարրես համալսարանի իրանական արշավախումբը Ալի Ռեզա Շոջաբրի Նովքարի զլանավորությամբ, Ք. Պիլլերը, ով ևս անդրադարձել է տարածքի հնագիտական ուսումնասիրությանը, մասնավորաբար կենտրոնացել է հուշարձանի թվագրության վրա) նշում են, որ ակնհայտ է այս կոթողների կապը քոչվոր կենսակերպ վարող վաղ իրանական ցեղերի հետ: Ինչ վերաբերում է կոթողների թվագրությանը, ապա բոլորը հավկած են այն թվագրելու մ.թ.ա. 1-ին հազարամյակի սկզբով [25, էջ 155-156], [27, էջ 53-76], [24, էջ 189-246, 216, 217]:

Հյուսիսային Կովկասում, Մերձական Սեպականում, Ղրիմում ներկայում հայտնի են ավելի քան 160 նման կոթող, որոնք ուղարկիրեն կապվում են կիմմերասլյութական մշակույթի հետ: Արձանների այս խումբը թվագրվում է մ.թ.ա. 7-3-րդ դդ., իսկ առանձին շրջաններում ավելի ուշ՝ ընդիուպ մինչև մ.թ. 3-4-րդ դդ. [14]:

Չնայած առկա որոշ պատկերագրական տարբերություններին՝ այս միևնույն կոթողների մշակութային պատկանելությունը ակնհայտ է: Հետազոտողները խոսում են սկզբութների կողմից հինարևելյան արձանների կրկնօրինակման մասին [22, էջ 237]: Այս դեպքում մենք կարող ենք խոսել սկզբուների կողմից իին իրանական այս ավանդույթի կրկնելու մասին: Գուցե իրենց ուսումնական արշավանքների և այլ շփումների արդյունքում սկզբութները տեսե՞լ են այս կոթողները և հետազություն, որոշ գաղափարական և ձևաբանական հավելումներ տալով ինքնուրույն կանգնեցրե՞լ: Նախնական դիտարկումներն անզամ բավարար են՝ նկատելու վաղ իրանական այս կոթողների ազդեցությունը Արցախից, Հյուսիսային Կովկասից և այլ շրջաններից հայտնի նմանատիպ կոթողների վրա:

Արցախյան կորողները թվագրվում են մ.թ.ա. 8-6-րդ դդ.: Գործածական առումով այս կորողները հանդիսանում են ինչպես գերեզմանաքարեր, որոնք տեղակայված են կուրզաների զագային կամ սրբարանի կենտրոնում: Հավանաբար պատահական չե, որ Արցախի տափաստանային հատվածներում (որտեղից և հայտնաբերվել են քարե կորողները) Խաչենագետի ձախ հովտում, սփռված են շուրջ 15 կուրզաներ, որոնք գործե այս կամ այն կերպ կապված են կորողների և նրանց կանգնեցման հետ կապված ծեսի հետ:

Հայկական լեռնաշխարհում վաղ իրանական ցեղերի, մասնավորաբար կիմմերների և սկյուրների վերաբերյալ ոչ քիչ տեղեկություններ են պահպանվել: Սակայն, ենելով այս աշխատանքի թեմայից՝ մենք ներկայացրինք այդ դրսերումները Հայկական լեռնաշխարհի միայն մեկ հատվածում՝ Հայոց արևելյան Արցախ և Ուտիք նահանգներում:

Ամփոփելով ասվածը՝ կարող ենք նշել, որ մ.թ.ա. 2-րդ հազարամյակի վերջ-1-ին հազարամյակի սկզբին իրանական ցեղերը, անցնելով Դերենստի լեռնանցքը և մտնելով Միլի տափաստան, ուղղվեցին դեպի Իրանական սարահարթ: Այս կապերը հատկապես մ.թ.ա 8-7-րդ դարերից սկսած ակտիվ շարունակվեցին կիմմերասկյութական ցեղերի կողմից: Վերջիններս նույնպես հավանաբար հետագայում այս նույն ճանապարհից են օգտվել Արևմտյան Ատրպատական անցնելու համար: Սակայն մենք հիմք չունենք պնդելու, որ սկյութական ցեղերը միայն այս ճանապարհով են անցել Իրան:

Մենք դեռ չենք տիրապետում տարածաշրջանի ամբողջ նյութին, որպեսզի պատկերացնենք նյութական մշակույթի և էթնիկական կազմի ու տեղաշարժերի ամբողջ համակարգը: Ուստի այս համառոտ զեկույցը ընդամենը մեկ փորձ է դասակարգելու եղած նյութը և միայն սփառեմատիկ հնագիտական ուսումնասիրության արդյունքում կարող ենք ավելի ընդհանուր պատկեր կազմել խնդրի վերաբերյալ: Մեր, ինչպես նախորդ հետազոտողների աշխատանքները առանձին երթուղիների ուսումնասիրման սահմաններից դուրս չեն եկել: Մասնավորաբար, ուսումնասիրված չե Արաքսի հովիտը, որը, ինչպես նշում է Ա. Ինսենը, անկասկած տարածաշրջանի՝ հնագիտական հուշարձաններով ամենախիտ շրջանն է:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Դալայյան Տ., Ալանական ցեղանունների առնչությունը Հայկական լեռնաշխարհի ցեղերին, Հայ ազգաբանության և հնագիտության խնդիրներ, Ի, Եր., 2006, էջ 63-68:
2. Հերոդոտոս, Պատմություն ինք գրքից, Ի, Եր., 1986:
3. Մկրտչյան Ռ., Փիլիպոսյան Ա., Ասրանացյան ազգի և Թորգումի տան ժառանգաբանական խնդիրների շուրջ, Հայոց սրբերը և սրբավայրերը, Եր., 2001:
4. Պետրոսյան Ս. Գ., Թրակա-կիմմերական ցեղերի միությունները Հայկական լեռնաշխարհում (մ.թ.ա. 6-4-րդ դարեր):
5. Քսենոփոն, Անարասիս, Եր., 1970:
6. Алиев И., О скифах и скифском зарстве в Азербайджане, Переднеазиатский сборник, т. 3, М., 1979.
7. Бессонова С.С., Религиозные представления скифов, Киев, 1983.
8. Виноградов В.Б., О скифских походах через Кавказ, Труды чечено-ингушского НИИ, т. IX, 196.
9. Гулиев Ф.Э., Брилева О.А., Курганская группа Топдагдаган- Новый памятник начала I тыс. До н.э. на территории Азербайджана, XXVIII Крупновские чтения РАН, Институт археологии, Материалы международной научной конференции, М., 21-25 апреля 2014.
10. Есаян С. А., Погребова М. Н., Скифские памятники Закавказья, М., 1985.
11. Ионе Г., Мингечаурская разновидность наконечников стрел «скифского» типа, Материальная культура Азербайджана, т. 3, Баку, 1953.
12. Крупнов Е.И., О походах скифов через Кавказ. ВССА, М. 1954.
13. Махмудов Ф. О бронзовых топорах Талыша, МКА, т. 7, Баку, 1973.
14. Ольховский В.С., Евдокимов Г.Л., Скифские изваяния VII-II вв. до н.э., М., 1994.
15. Пиоторовский Б.Б., История и культура Урарту, Еր., 1940.
16. Погребова М.Н., К вопросу о связях восточного Закавказья и Ирана в конце II-начале Iтыс. до н.э., История Иранского государства и культуры, М, 1971.
17. Погребова М.Н., Памятники скифской культуры в Закавказье, Кавказ и Средняя Азия в древности и средневековье, М., 1981.
18. Страбон, География, XI, М., 1964.

19. Тер-Аветисян С. В. Памятники древности Карабаха и скифская проблема, Арменоведческие исследования, Ер., 2010.
20. Техов Б.В., Скифы и Центральный Кавказ VII-VI вв. до н.э., М., 1980.
21. Халилов Дж. А., Археологические находки “скифского” облика и вопрос о “Скифском царстве” на территории Азербайджана, Проблемы скифской археологии, М, 1971.
22. Шульц П. Скифские изваяния Причерноморья, Античное общество, М., Наука, 1967.
23. Бонгард-Левин Г.М., Грантовский Э.А.. От Скифии до Индии. Древние арии: мифы и история. // Изд. 2-е, испр. и доп. М.: Мысль. 1983.
24. Azarnoush M., Helwing B., Recent archaeological research in Iran: Prehistory to Iron Age Archaeologische Mitteilung aus Iran und Turan, 37, 2005; Recent archaeological research in Iran – Prehistory to Iron Age.
25. Burney Ch., Meshkinshukr survey, Iran, Vol. XVII, 1979.
26. Petrenko V. G., Scythian culture in the North Caucasus, Nomads of the Eurasian steppes in the Early Iron age.
27. Piller Ch. K., Northern Iran in the Iron Age II and III: A neighbor of Urartu?, Aramazd, Vol. V, No. 2, 2010.
28. Piller Ch. K., The Caucasian connection – Reflections on the transition from the Late Bronze to the Early Iron Age in Northern Iran and its connections to the Southern Caucasus, The Caucasian connection – Reflections on the transition from the Late Bronze to the Early Iron Age in Northern Iran and its connections to the Southern Caucasus.

РЕЗЮМЕ

**Арцах и Утик между Ираном и Кавказом в 1-ом тысячелетии до н.э.
Нжде Еранян**

Ключевые слова: Закавказье, Передняя Азия, бронзовый, киммеро-скифская культура, каменные антропоморфные изваяния.

В данном докладе мы обратились к исследованиям культурных связей между Закавказьем и иранскими степями кон. 2-ого тыс. и нач. 1-ого тыс. до н.э. Тема представляет собой особый интерес, т.к., видимо, данные связи проходили по Арцаху (по Мили степи). Это, несомненно, оставило свой след в культуре железного века Арцаха. Примерами являются группа каменных антропоморфных изваяний, стрелы скифского типа и другие образцы оружия, а так же ряд других археологических находок, которые были найдены на территории Арцаха. Скорее всего, эти связи были особенно активны в VIII-VII вв. до н.э., что было обусловлено вторжением химмеро-скифских племен в этой области.

SUMMARY

**Artsakh and Utik between Iran and the Caucasus in the 1st millennium BC
Nzhdeh Yeranyan**

Keywords: South Caucasus, Bronze Age, Iron Age, Western Asia, Cimmerian and Scythian cultures, anthropomorphic stelae.

This report is dedicated to the analysis of culture ties between South Caucasus and Iranian steppes in II-I millennium BC. Apparently, these connections were passing through Artsakh /Mill steppe/. These connections definitely left their trace on Artsakh's Iron Age culture. A group of anthropomorphic stone stelae, some Scythian-like arrows and other weapons as well as a range of archeological findings from different areas in Artsakh serves as an evidence for this. Most probably, these connections were more active in VIII-VII century B.C. due to Cimmerian and Scythian tribes' penetration into these regions.